

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գովհասի կառավարչապետի կեանքի դեմ սպանութեան փորձը:—Թագաւոր Գայսի հետագիրը:—«Право» թերթը մի դատաստանական հարցի առիթով:—Խուզարկեանի որքանոցը:—«Финляндская Газета»-ի հաղորդագրութիւնները:—Հետաւոր Երեւելիի Սոանձիկ կոմիտէի հաստատումը:—Կարգադրութիւններ մամուլի վերաբերեալ:

Իշխան կառավարչապետ Գրիգորիյ Սերգէեւիչ Գոլիցըրիի կեանքի դէմ տեղի ունեցած սպանութեան փորձի մասին «Кавказъ» լրագիրը հետեւեալ մանրամասնութիւններն է հաղորդում.

«Յերեքշաբթի, հոկտեմբերի 14-ին, ժամի մօտ 2-ին, իշխան Գրիգորիյ Սերգէեւիչ գնաց իր ամուսին իշխանուհի Մարիա Ֆէոդորովնայի հետ, երկձի կառքով, որի մէջ, կառապանի հետ, նստած էր նաև կողակ-ուրեազնիկ Դմիտրիյ Սիպլիւենկօ, զբօսնելու դէպի բուսաբանական այգին: Յերեկուայ ժամի մօտ 4-ին, նոցին պայծառափայլութիւնները վերադառնում էին այն ճանապարհով, որ ձգւում է բուսաբանական այգուց դէպի Կոջորի խճուղին: Այդ ճանապարհի զառիվերի վրայ, ոչ հեռու այն տեղից, ուր նա միանում է խճուղու հետ, հանդարտ առաջ գնացող կառքի հետ հաւասարուեցին երեք միջին տարիքի անձինք, որոնք հագել էին հասարակ քաղաքային շորեր: Այն ժամանակ, երբ իշխան կառավարչապետը պատասխանում էր նրանց ողջոյններին, չարամիտները վրայ վազելով դէպի կառքը, աղաղակեցին կառապանին. «կանգնիր»: Նրանցից մէկը թուա կառքի մօտ աջ կողմից, ուր նստած էր իշխանուհին, հանեց գրպանից խանչալը և կանգնելով կառքի ոտնաստիճանի վրայ՝ սկսեց նրանով հարուածներ հասցնել իշխանին: Մնացած չարամիտները յարձակուեցին իշխանի վրա կառքի ձախ կողմից և փորձեցին

գուրս քաշել նրան կառքից՝ հեռացնելով միևնույն ժամանակ իշխանուհուն, որ իր մարմնով ծածկում էր նորին պայծառափայլութեանը աջ կողմի չարամիտից։ Բայց իշխանին աջողուեց ազատուել նրանցից իր ձեռքում գտնուող ձեռնափայտով։ Այդ վայրկեանին կառապանը մտրակեց ձիերին և քնեց կառքը այնքան արագ, որ յարձակուողներին չ'աջողուեց կատարածել իրանց դիտաւորութիւնը։ Ուրեաղնիկ Սիպլիւենկօ վայր թռչելով կառապանի տեղից՝ կառքի յանկարծական արագ շարժման պատճառով վայր ընկաւ, բայց իսկոյն վեր կացաւ և յարձակուեց չարամիտների վրայ, որոնք մի քանի գնդակներ արձակեցին, և այդ ժամանակ գնդակներից մէկը դիպաւ Սիպլիւենկօի ոտքին և ծակելով նրան՝ դուրս թռաւ։ Ամբողջապէս արնաշաղախ, բայց մնալով կատարեալ գիտակցութեան մէջ և գլուխ տալով անցնելու ժամանակ նրան ողջունող անձերին, իշխան Գրիգորից Սերգէեւիչ վերադարձաւ տուն և կառքից դուրս գալիս՝ հրամայեց անյապաղ կողակներ ուղարկել Սիպլիւենկօին փրկելու համար։ Ապա սանդուղքներով բարձրանալով իր սենեակը և անհրաժեշտ կարգադրութիւններն անելով, սկսեց սպասել իր առանձնասենեակում հրաւիրուած բժշկի գալուն։ Դրանից յետոյ չուտով եկած բժիշկները գտան իշխանի վրայ խանջալով հասցրած չորս վերքեր, մէկը՝ գլխին, գլխարկի վրայից, երկուսը՝ դէմքին և մէկը ձախ բազուկի արմունկին։ Այս վերջին վէրքը թեթեւ է և ստացուած է ըստ երկուցիւն այն ժամանակ, երբ իշխանը պաշտպանուելով կրծքին ուղղուած հարուածից՝ բարձրացրել է ձեռքը։ Մնացած վէրքերը, բժիշկների կարծիքով, թէև աւելի խոր են, բայց վտանգաւոր չեն կեանքի համար, և բացի սրանից գլխին հասցրած վէրքը չէ մլեասել գանգի ոսկորները։ Վէրքերը կապելուց յետոյ նորին պայծառափայլութիւնը դուրս եկաւ ընդունարանը, ուր հաւաքուել էին այդ ժամանակ տեղական հասարակութեան ներկայացուցիչները և ներկայացուցչուհիները։ Տպուած քիւլկատնից ընթերցողներին արդէն յայտնի է, որ թէև դէպքի հետեակ օրը հիւանդի տաքութեան աստիճանը բարձրացաւ, բայց վէրքերը, վիրակապները փոխելիս, գտնուեցին լաւ դրութեան մէջ, և ոչ մի բարդութիւն նրանց մէջ չ'երեաց։ Իշխանուհի Մարիա Ֆեոդորովնայի չորը կտրուած է այն հարուածից, որ նա ստացել է ձեռքին յարձակման ժամանակ։ Չը նայելով նոր միայն զգացած տեսարանի ցնցող տպաւորութեան և անհանգստութեան ամուսնու առողջութեան մասին, իշխանուհին ունեցաւ բաւականաչափ հոգեկան ոյժ՝ տեղական հասարակութեան ներկայացուցիչներին և ներկայացուցչուհիներին ընդունելիս՝ գոհացնել իւրաքանչիւրի հասկանալի ցանկութիւնը՝ իմա-

նալու գէպքի մանրամասնութիւնների մասին և չը թողեց առանց հոգացողութեան վիրաւորուած ծառային: Ընչպէս արդէն յայտնի է ընթերցողներին, Հարամիտները չը կարողացան թագնուել: Հէն որ լսուե ին նրանց գնդակաձգութեան ձայները, Լոլաձէի տան մօտ գտնուող խանութից գէպի գէպքի տեղը վազեցին մի քանի մասնաւոր մարդիկ, որոնց թւում և Լոլաձէի որդին ու ոստիկանական զինուորը, որոնք ընկան Հարամիտների ետևից և չը կորցնելով նրանց աչքից՝ հետամուտ էին լինում մինչայն ժամանակ, երբ վրայ հասան ուղարկուած կողակները և ստորանիկները: Որովհետև Հարամիտները պաշտպանում էին իրանց հրաձգութեամբ հալածողներից, ուստի նրանց վրայ բաց արած կրակով մէկը սպանուեց և երկուսը վիրաւորուեցին: Քաղաք բերելուց յետոյ՝ վիրաւորուածներից մէկը մեռաւ, առանց ուշքի գալու, իսկ միւսը կարողացաւ տալ մի քանի ցուցումներ և մեռաւ հիւանդանոցի ճանապարհին: Չարամիտներից՝ մէկի գրք-պանում գտնուած է անցագիր: Բացի սրանից նրանց պատկանած իրերից գտնուած են երկու խանչալ, որոնցից մէկը ծառայել է իբրև ոճիրի գործիք, և երեք ատրճանակ: Բոլոր երեք Հարամիտները պատկանում են հայ ազգաբնակչութեան ստորին դասին:

Նորին պայծառափայլութիւն գեներալ-ադիւտանտ Իշխ. Գոլիցըրներ իր կեանքին սպառնացող վտանգից աղաւտուելու առիթով, հօկտ. 15-ին բազմ ունեցաւ Վոյֆգարդներից (Դարմաշտագտ) ստանալ Նորին Կայսերական Մեծութեան հետեւալ հեռագիրը.

Շնորհակալ եմ Աստծուց, որ փրկեց Ձեր կեանքը: Սրտանց ցանկանում եմ Ձեզ արագ առողջանալ, որպէսզի կարողութիւն ունենաք նախկին եռանգով եւ ջանասիրութեամբ շարունակելու Ձեր բազմօգուտ ծառայութիւնը Ռուսաստանին եւ Ինձ: Ողջոյն Իշխանուհուն:

ՆԻԿՈԼԱՅ

Ռուսաց «Право» լրագրի այս տարուայ № 42-ի մէջ կարդում ենք. «Սեպտեմբերի 6-ին Եկատերինոգրի նահանգական դատարանի բաժանմունքը քննեց Արմաիրում տեղական հայոց եկեղեցուց կատարուած գողութեան գործը: Աստրախանի հայոց կոնսիստորիայի հաւատարմութիւնով, իբրև քաղաքացիական պահանջատէր՝ ներկայացաւ երգուեալ հաւատարմատար Ջաւադբէգ Բալուզեան և ներկայացրեց 800 ռուբլու պահանջ մեղադր-

բուռններին: Մեղադրուողների պաշտպան Կանատով առարկեց, թէ Աստրախանի կոնսիստորիան իրաւունք չ'ունի ինքնուրոյնաբար հանդէս գալ իբրեւ պահանջատէր, որովհետեւ նա իրաւաբանօրէն գոյութիւն չ'ունի, չէ կարող գործել և 1903 թ. յունիսի 1-ի օրէնքի հիման վրայ գրուած է ներքին գործերի մինիստրութեան խնամակալութեան տակ, և միայն մինիստրութեան օրգանները իրաւունք ունեն սկսել քաղաքացիական պահանջ այդ գործի համար: Կոնսիստորիայի հաւատարմատար Բալուզեան առարկեց, որ թէև հայոց եկեղեցին իրաւաբանօրէն գործելու իրաւունք չ'ունի յիշեալ օրէնքի համաձայն, սակայն ոչ բոլորովին: Այդ օրէնքով թողնուած է նրան իրաւունքի մի փոքր շրջան, ուր նա կարող է անկախօրէն գործել. այդ շրջանը՝ եկեղեցու ներքին սեփականութիւնն է և այն ամենը, ինչ որ գտնուում է երեք դասատին տեղ տարածութեան վրայ եկեղեցու շրջակայքում: Այդ շրջանի մէջ ուրիշ ոչ մի իշխանութիւն մուտք գործել չէ կարող, և որովհետեւ եկեղեցիներից գողացուել են սրբազան անօթներ, ուստի նրանց տէրը ինքը եկեղեցին է: Դատարանը վճռեց ճանաչել Աստրախանի կոնսիստորիային քաղաքացիական պահանջատէր և լիակատար գոհացումն տուեց նրա պահանջներին:

Ինչպէս յայտնի է, 1897 թ. Թիֆլիսում վախճանուած Յովհաննէս Խուզադեանը իր ամբողջ կարողութիւնը կտակել էր հայոց Բարեգործական Ընկերութեան՝ Թիֆլիսաբնակ հայ չքաւոր դասակարգի օգտին գործադրելու նպատակով: Այդ կարողութիւնը հաշուում է մօտ 170 հազար Բարեգործական Ընկերութիւնը պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեամբ «Աղջկանց որբանոց» բացարաւ Արդ, այդ որբանոցի մասին «Մըշակը» հաղորդում է հետեւեալը:

Որբանոցը գտնուում է Աբաս-Աբադեան հրապարակի վրայ, Խուզադեանցի կտակած տան մէջ, վերեւ յարկում, որը Բարեգործական Ընկերութեան վարչութիւնը յարմարեցրել է առանձնապէս որբանոցի համար: Որբանոցը բաղկացած է եօթը յարմար լուսաւոր սենեակներից, ունի յատուկ ննջարան, սեղանատուն և միևնոյն ժամանակ պարապմունքի տեղ, լողարան, ընդարձակ խոհանոց իր բոլոր յարմարութիւններով: Որբանոցը թէ իր արտաքինով և թէ իր ներքինով թողնում է ցանկալի տպաւորութիւն:

Որբանոցում ընդհանուր ժողովի որոշմամբ ընդունուելու են առհասարակ՝ որբեր, կիսաորբեր և չքաւոր ծնողների զաւակներ: Առայժմ ընդունուողների մի մասը բոլորովին որբեր հսկամբեր, 1903.

են, իսկ մնացածը կիսաորբեր: Նրանց հասակն է 6 տարեկանից մինչև 10 տարեկան: Ընդամենը ընդունուած են 20 հոգի: Առայժմ այդ որբերից 15-ը այցելում են ուսումնարան, իսկ երբ խնրահաս դառնան, նրանց կ'ընտելացնեն զանազան անային և այլ աշխատանքների: Նրանք որբանոցում մնալու են մինչև այն հասակը, երբ ընդունակ կը լինեն ինքնաշխատութեան և ինքնօգնութեան»:

Պաշտօնական «Финляндская Газета» թերթում հրատարակուած է Բարձրագոյն վճիռ Կայսերական ֆինլանդական սենատի ամենահպատակ առաջադրութեան առիթով՝ բանալ 1904 թւականին հերթական սէյմ՝ (ազգային ժողով): Թագաւոր Կայսրը Ամենաողորմածաբար բարեհաճեց յետաձգել այդ հարցի վերջնական վճիռը, մինչև որ Փինլանդիայում կեանքի խաղաղ ընթացքը վերականգնուի: Ֆինլանդական ղեկերանձանդապետին հրամայուած է ղեկուցանել Թագաւոր Կայսրին ոչ ուշ 1904 թ. յունիսից հասարակական կարգի դրութեան մասին իրան յանձնած երկրում:

Նոյն լրագրում տպուած է. «Ի կատարումն 1900 թ. յունիսի (20) Բարձրագոյն մանիֆեստի, այս հոկտեմբերի 9-ին Կայսերական ֆինլանդական սենատում առաջին անգամ, ներկայութեամբ երկրի կառավարչապետ գ.-ադ. Բորրիկովի, գործերը ղեկուցում էին ոռւսերէն լեզուով:

Նոյն թերթում տպուած է Վազայեան նահանգապետի հետեւալ որոշումը.

1) Վազայեան քաղաքներում և գիւղերում արգելում են ժողովրդի ժողովներն ու գումարումները փողոցներում, հրապարակի վրայ, այգիներում, սկզբներում և այլ հասարակական տեղերում՝ հասարակական կարգի և խաղաղութեան հակառակ խորհրդակցութիւնները կամ գործերի համար, կամ հակակառավարական ցոյցեր անելու նպատակով: 2) Վերև յիշած ժողովները և գումարումները, ինչպէս և թէկուզ առանց որեւէ յանցաւոր դիտաւորութեան այդտեղ եկած կողմնակի հասարակութիւնը, պարտաւոր են ցրուել պոլիսիայի առաջին պահանջմամբ: 3) Արգելում է առաջին կէտում ցոյց տուած տեղերում ամեն տեսակ երգերի, սաղմոսների երգեցողութիւն, ճատերի, շնորհաւորութիւնների և այլն արտասանութիւն, եթէ դրա մասին չէ ստացուած պատշաճաւոր իշխանութիւնից գրաւոր թոյլտուութիւն: 4) Այս կարգադրութիւնը խախտողները ենթարկուած են 400 մարկ տուգանքի կամ վճարելու անկարողութեան դէպքում բանտարկութեան՝ համաձայն քրէական օրէնքների § 5, գլ. 2.:

5) Այդ կարգադրութիւնը խախտելու մասին գործերը հանուում են դատարանի քննութիւնից և ենթարկուում են նահանգապետի հայեցողութեան ազմխնիստրատիւ կարգով:

1) Արգելուում է քաղաքներում և գեղեղերում որեւէ հասարակական ժողով կազմել, առանց իւրաքանչիւր անգամ նահանգապետի թոյլտուութեան կախել կամ ցոյց դնել այլ դրօշակներ, բայի ազգային և ուսումականի, և ամեն տեսակ էմբլեմներ և զարդեր այլ գոյնների, բայի ազգային ուսուկանի: 2) Այս կարգադրութիւնը խախտողները ենթարկուում են 400 մարկ տուգանքի կամ վճարելու անկարողութեան դէպքում բանտարկութեան՝ համաձայն քրէական օրէնքների § 5, գլ. 2.: 3) Այդ կարգադրութիւնը խախտելու մասին գործերը հանուում են դատարանի քննութիւնից և ենթարկուում են նահանգապետի հայեցողութեան ազմխնիստրատիւ կարգով:

Հետաւոր Արեւելքում հիմնուում փոխարքայութեան կառավարական ամենակարեւոր գործերի նախաքննութեան համար կազմուած է Հեռաւոր Արեւելքի Առանձին կոմիտետ: Սեպտեմբերի 30-ին Բարձրագոյն հագոտաւում է այդ կոմիտետի կանոնադրութիւնը: Կոմիտետում նախագահում է Անձամբ Թաղաւոր Կայսրը, իսկ Նորին Մեծութեան բացակայութեան ժամանակ անդամներից մէկը ըստ հայեցողութեան Կայսրի: Կոմիտետի անդամներն են. ներքին գործերի, ֆինանսների, արտաքին գործերի, զինուորական և ծովային մինիստրները, բայի այդ Բարձրագոյն հայեցողութեամբ նշանակուած անձինք: Հեռաւոր Արեւելքի փոխարքան, լինելով ըստ պաշտօնի կոմիտետի անդամ, մասնակցում է նիստերին Պետերբուրգում գտնուած ժամանակ: Կոմիտետի գործավարարութիւնը յանձնուում է անդամներից մէկին Բարձրագոյն ցուցմամբ: Առետրական ծովագր-նացութեան կառավարչապետի օգնական կոնտր-անդմիրալ Ա. բազով նշանակուած է Հեռաւոր Արեւելքի Առանձին կոմիտետի անդամ և նրա գործերի կառավարիչ:

Կարգադրութիւններ մամուլի վերաբերեալ

Ներքին գործերի մինիստրը որոշեց նորից թոյլ տալ «Русскія Вѣдомости» լրագրի հատով վաճառումը, որ արգելուած էր այս տարուայ մարտի 1-ի կարգադրութեամբ:

«С.—Петербургскія Вѣдомости» թերթին սեպտ. 26-ին

№ 263-ում տպուած առաջնորդողի համար ներքին գործերի մինիստրը յայտնում է առաջին նախագիտւնացում:

Մամուլի գլխաւոր վարչութեան կարգադրութեամբ ֆինլանդիայում նախագիտւնութիւն է արուած Հելսինգֆորսում լոյս տեսնող «Hufvudstadsbladet» լրագրին:

Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ արգելուած է «Русское Слово» լրագրի հատուկ վաճառումը: